ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 121

«14» 10 2020 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 38 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ Արսեն Սարդարյանի անդամությունը դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N 119 հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ մասերով, 23-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 31-ի N 24 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 45 հրամանի 15-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ նշանակել Երևանի կայազորի զինվորական դատախազ Արթուր Անտոնյանին՝ 3 տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի փետրվարի 24-ի N 8 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 38 հրամանի 1-ին կետում՝

«**Արսեն Սարդարյան** - Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ»

պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

«**Արթուր Անտոնյան** - Երևանի կայազորի զինվորական դատախազ»:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ